

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան  
Հաշվետվություն**

**ՀՀ Արմավիրի մարզի Արտամետ համայնքի ղեկավարի  
2018թ. -ի գործունեության  
վերաբերյալ**

2019թ-ի հունվարի 31-ին ժամը 14:00-ին կայացավ Արմավիրի մարզի Արտամետ համայնքի ղեկավարի 2018թ-ի հաշվետվությունը:

Հարգելի Արտամեցիներ, հարգարժան համայնքի ավագանու անդամներ և հյուրեր : ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից սահմանված կարգի համաձայն այսօր ես ձեր ուշադրությանն եմ ներկայացնում մեր համայնքապետարանի կողմից 2018 թվականին կայացած աշխատանքները ըստ գործունեության բնագավառների:

Հաշվետվության ընդգրկված ժամանակաշրջանում՝ 2018 թվականի ընթացքում գումարվել է համայնքի ավագանու թվով 8 և 1 արտահերթ նիստ, որի արդյունքներով կայացվել է 19 որոշում, քննարկվել է ֆինանսական հարցեր:

## Ֆինանսների բնագավառում.

2018 թվականի համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերը:

ՀՀ օրենսդրության սահմանված կարգով 2018 թվականի ընթացքում տնօրինվել են համայնքի բյուջեի միջոցները և ապահովել դրանց նպատակային օգտագործումը: Օրենքով սահմանված կարգով որպես պետության կողմից պատվիրակված լիազորություն համայնքում կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձումներ: 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պլանով սահմանված՝

Հողի հարկ՝ 9961.0 հ.դ --- 8707.159 հ.դ 90.1%

Գույքահարկ՝ 288.0հ.դ --- 344.272 հ.դ 119 %

Հողի վարձ,՝ 262.2հ.դ --- 481.082 հ.դ 183.4 %

Սեփական եկամուտների մուտքերի ապահովման համար իմ կողմից գրավոր ուղարկվել է բոլոր մեծ պարտքեր ունեցող հողի սեփականատերերին և վարձակալներին և ժամկետ է սահմանվել որպեսզի մինչև տարեվերջ հավաքագրվի և մուտքագրվի պլանով նախատեսված գումարը:

## Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում.

Նախատեսվել էր 2018թ. ընթացքում իրականացնել համայնքի տարածքում որոշ հատվածներում հիմնական լուսավորման խնդիր և ցերեկային լուսավորության անցկավման խնդիր: Մակայն ,քանի որ հողի հարկերի հավաքագրման հարցում ունեցանք խնդիրներ,կապված հատկապես արտասահմանում գտնվող որոշ խոշոր հողատերերի հետ ուստի չապահովեց անհրաժեշտ գումար մեր նախատեսած ծախսերն իրականացնելու համար: Մակայն 2018թ. տարվա վերջում ունեցանք 1.500.000 հհ դրամի տնտեսում,որն արդեն տեղափոխվել է ֆոնդային բյուջե և 2019թ. հենց փետրվար ամսից մենք պլանավորել ենք հենց այդ աշխատանքները:

## **Հողօգտագործման բնագավառ.**

Հողերի արդյունավետ օգտագործման ու պահպանության խնդիրները լուծելու համար համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացրել հողօգտագործողների, հողի սեփականատերերի կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ: Վերահսկողություն է սահմանվել համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառմանը, հողային հաշվեկշռի կազմման, ներտնտեսային հողաշինարարական աշխատանքների իրականացման նկատմամբ, բացի այդ լրացուցիչ աշխատանքներ են իրականացվում որոշ հողատերերի կողմից հիմնած պտղատու և խախողի այգիների հիմնման աշխատանքների փաստագրման և հաշվառման համար որի արդյունքում լրացուցիչ գումարներ են մուտք լինում բյուջե:

## **Աշխատանքի և սոց ծառայության բնագավառ.**

Հիշատակված բնագավառում համայնքի ղեկավարը աջակցել է նոր աշխատատեղերի ստեղծմանը, պայմաններ է ստեղծել համայնքի ազգաբնակչությանը աշխատանքի անցնել գյուղապետարանի աշխատակազմում և դայրոցում, սակայն 2018թ. ընթացքում մենք շուրջ 10 ամիս չունեինք աշխատակազմի ղեկավար, որը համայնքային ծառայող էր, իսկ համայնքում չունեինք համապատասխան մասնագիտություն և աշխատանքային ստաժ ունեցող անձնավորություն, որի համար մրցույթին մասնակցել և հաղթող է ճանաչվել Քարակերտ համայնքի բնակիչ

Ա. Մարտիրոսյանը:

Ինչպես գիտենք 2018թ. դեկտեմբեր ամսին մահացել է գյուղի բնակիչ և միաժամանակ համայնքապետարանի աշխատակից Ֆլորա Մկրտչյանը, որի համար օրենքով սահմանված կարգով վճարվել է մահվան նպաստ մեկ ամսվա աշխատավարձի չափով: Դրանից բացի համայնքում որևէ սոց օգնություն, պարգևատրություն և այլ հավելավճարներ տեղի չեն ունեցել:

2018թ. դեկտեմբերին ամանորյա միջոցառումներին համայնքի 0-18 տարեկան երեխաներին համայնքապետարանի կողմից տրվել է ամանորյա նվեր-տոպրակներ:

## Գյուղատնտեսական բնագավառում.

ա) Հունվարի 1-ից մինչև 18-ը համայնքում առկա կենդանիների ըստ տեսական հաշվառումը և սահմանված ժամկետում հաշվառման վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է վիճակագրական ծառայություն:

Համաձայն այդ հաշվառման պարզվել է, որ համայնքում կա մանր եղջերավոր՝ 2682 գլուխ, խոշոր եղջերավոր անասուններ՝ 413 գլուխ, խոզեր՝ 62, թռչուն՝ 816 :

բ) Համայնքի ղեկավարը օրենքով իրեն վերապահված պետության կողմից պատվիրակված լիազորության շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է իր իրավասությունների սահմաններում կազմակերպվել է առկա անասնազիլաքանակության հիվանդությունների կանխման, ինչպես նաև հակահամաճարակային միջոցառումները և ագրարային այլ կանոնների պահպանման աշխատանքները:

գ) Համայնքում իրականացվել է աղբահանության աշխատանքներ՝ ըստ գրաֆիկի: Գործող օրենսդրության համաձայն աղբահանությունը պետք է իրականացվի համայնքի բնակիչների հաշվին, որի համար սահմանված էր յուրաքանչյուր տնտեսությունից գանձել 300 հի դրամ ամսեկան գումար, որը սակայն չի իրականացվել և ամբողջ աղբահանությունը իրականացվել է համայնքապետարանի միջոցների հաշվին: 2019թ-ին նախատեսվել է իրագրել ողջ բնակչությանը որպեսզի գանձվի 50 հի դրամ մեկ շնչին ամսեկան վճարը:

դ) Համայնքի ղեկավարի աջակցությամբ 2017 թվականի աշնանը և 2018 թվականի գարնանը Արմավիրի մարզպետարանի և ՀՀ գյուղ. նախարարության օգնությամբ ձեռք բերվեց դիզելային վառելանյութ, պարարտանյութ և այն պայմանագրային կարգով բաժանվեց գյուղացիական տնտեսություններին:

Համայնքի ղեկավարը հաշվետվությամբ ընկած ժամանակահատվածում աջակցություն է ցուցաբերում գյուղացիական տնտեսություն վարող ֆերմերների մարդկային ռեսուրսներով ապահովելու հարցում, որի արդյունքում ստեղծվել է շուրջ 30 աշխատատեղ և միջին օրական աշխատավարձը կազմել է 6000-7000 ՀՀ դրամ:

Համայնքի հողային հաշվեկշռի համաձայն մեր համայնքում հաշվարկված է 778.15 հեկտար վարելահող, 611.05 հեկտար բազմամյա տնկարկներ:

Համայնքապետարանի կողմից հունիսի 1-ի դրությամբ ցանքատարածությունները ըստ մշակաբույսերի ներկայացվել վիճակագրական ծառայություն:

## Հիմնախնդիրներ

1. Ներհամայնքային փողոցների բարեկարգում
2. Համայնքի գազաֆիկացում, որը մեր դեռևս լուրջ խնդիրն է և որի համար մենք որոշել ենք դիմել ոչ միայն ՀՀ կառավարությանը այլ նաև մեր տարածքում գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող խոշոր հողատերերի, որոնք մեր կարծիքով ունեն հնարավորություն և ինչու չէ պարտավորություն մեզ օժանդակելու:
3. Վթարային վիճակում գտնվող որոշ նրբանցքների հիմնական լուսավորման և համայնքի ցերեկային լուսավորման հարցի կարգավորում:
4. Հուշարձանի շրջակայքի բարեկարգում և խաչի տեղադրում:

Համայնքի ղեկավար՝



Ա. Գավթյան